

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՍՏԱԿ ԿՈՐ ՈՅԻԷ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻ Է ՈՒՂՂԵՆ ԼՍՈ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Ձեռագիրներն եւ չեն դարձուիր

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇՈՒՄԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

ՂՐԵ, ՈՂՁ

Գահիրէի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից »	սարեկան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏԱՍՏՄԱՆԻ ՉԱՄԱՐ		
Տարեկան	Ֆրանգ	18
Վեցամսեայ	»	11

ՌՈՒԹՅՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՉԱՄԱՐ		
Տարեկան	րուբլի	7
Վեցամսեայ	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԸ ԿԱՆԻՊԿ Է ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱՆՊԸ ԹԵՐԻՒՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ Է

ՇԱՐԱՔ ՅՈՒՆԻՍ 2/15 1901

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 95

Ա Չ Դ

Ներդրութիւն կը խնդրենք արգոյ բաժանորդներէն որ չի կրցանք լուրերու բաժին մը յատկացնել «Նոր-Օր»ի այսօրուան թիւին մէջ, հարկադրուած ըլլալով այսօր՝ հրատարակել վարչութեանս միամտեայ տեղեկագիրը, և լսարանի բացման հանգէսին նկարագրութիւնը, որ թերթին մեծ մասը գրաւած են:

«ՆՈՐ-ՕՐ»Ի ՏԱՐԵՐԶԱՆԻՆ ԱՌԹԻՒ

«Նոր-Օր» որովհետեւ ծնած է սպրեւու իրաւունք ունի» կ'ըսէր հաշուներնիչ Յաննաթողովը անցեալ տարի «Նոր-Օր»ի եռամսեային առթիւ իր մատուցած տեղեկագիրին մէջ, որուն այդ մասը մեր այսօրուան տեղեկագիրին մէջ ևս արտասպաճ ենք:

Այդ ատենը «Նոր-Օր» դեռ երախայ մ'էր եռամսեայ, որուն համար այնքան զոհողութիւններ եղած չէին: Որքան աւելի զգալի է ուրեմն սպրեւու պէտքը այսօր, ուր չորս եղանակներ բողբոլէ յետոյ, չտփահասի մը վիճակին մէջ, կեանք, կը գոչէ «Նոր-Օր»: Ըլլայ վարել, ըլլայ բաժանորդ, որքան անխիզճ ըլլալու է, նախանձախնդիր չըլլալու համար գոյութեանը այնպիսի ստեղծութիւններ, քիչ հոգեր տարուած չեն, և որուն պտուղը դեռ նոր պիտի բազենք:

Մի՞թէ այս չէ՛ հօր մը և կոմ մօր մը վիճակն ալ հանդէպ իր զաւակին: Զաւակ մը որքան մեծնայ, որքան զարգանայ, այնքան քաղցր, ու թանկագին կըլլայ իր մօրը համար, որոնք ախ և գիշեր քուններին կտրած, կեանք մաշեցուցած են այդ էակին համար:

Ահա այս նուիրական բնագոյամբ կ'ուզանք «Նոր-Օր»ը շարունակել, և մեծ յոյս ունինք թէ յարգոյ հասարակութիւնը պիտի քաջայերէ զմեզ, մեր զուտ ազգօգուտ ձեռնարկին մէջ: Վստահ եմք թէ վայրկեան մ'իսկ չը պիտի կասի քաջախերելէ, երբ տեսնէ նամանականդ՝ որ իրմէ քո-

չալերութիւն ու աշակցութիւն սպասողները՝ էն մեծ անձնական զոհողութիւն ընդունեն ևն իրենց ազգին համար:

Յարգոյ հասարակութիւնը բաւ է որ կարգայ այսօրուան մեր տեղեկագիրը ճշմարտութեան վերահասու ըլլալու համար:

Նա պէտք է գիտնայ թէ այսօր նիւթապէս ու բարոյապէս ազգին ծառայողները՝ կ'ուզան որ մը որ կը դադրին ծառայելէ, զի ատոր մարդկային ֆակտորն որ միսմինտի շարժելով, յուզուելով, տալով, զոհելով կ'ուզայ ընդէ մը որ ուժասպառ կըլլան, կը յոգնին, կը հատնի իրենց նիւթական ու բարոյական մեքենային իւզը, ու վերջը վերջը կամայ ակամայ հըրաժեշտ կուտան արտասուածք՝ ազգային գործունէութեան ասպարէզին:

Ինչ կըլլայ ասոր վախճանը: Ուրիշ բան չէ բայց եթէ բարոյական, մտաւորական, ազգային անկում:

Տեսէք այսօր, երկու շաբաթէ ի վեր, կամ աւելի որոշ խօսելով մեր արդար քննադատականներէն ի վեր՝ Ազգային Առաջնորդարանի յարկին մէջ՝ մեծ զոհողութեամբ և խնամքով կը տեսնուին գործերը, ամիս մը առաջ Ազգին դիմողները վճարող, անիրաւութիւններ գործող Տ. Մամբրէն, այսօր կը շոյէ ու կը սիրաշահէ զանոնք:

Ամիս մը առաջ վախկոտութիւն, թուրութիւն ցոյց տուող Առաջնորդը՝ լսարանի, Ազգատախտամի և ազգային գործերու վրայ աւելի հայրախնամ կ'ործածէ աչք սկսած է նայել: Միջկցեք մամուլը, արդիւնքէք բննադատութիւնները, հալածեցեք յանուն արդարութեան բողբոջները, և պիտի տեսնէք որ այդ միջբողբոջները պիտի վերակենդանան աւելի հզօր քան երբէք:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԱՅՎԱԶԵԱՆ «ՆՈՐ-ՕՐ», ՄԻՋԱԿԷՊԻ Ա Ռ Թ Ի Ի

«Բրքի էժիքսիէն» որ Գահիրէ հըրատարակող երոպական թերթերուն էն ճշգրիտ տեղեկութիւն տուողն է՝ հետեւեալ կը գրէ Այվազեան-«Նոր-Օր» միջկցեպին առթիւ, որի թարգմանութիւնը կը գնենք նոյնութեամբ: «Մեր հայ պաշտօնակից «Նոր-Օր»

կ'ըսէ «Բրքի էժիքսիէն» որի արձանագրութիւնն է փաստաբան Պ. ֆափազեան, «Եղիպտոսի Հայոց Առաջնորդ Այվազեան Սրբազանի հետ անհրաժեշտ «ձայնութեան մէջ է ինչ ինչ սպառազային խնդրոց առթիւ, Եղիպտոսի Առաջնորդը՝ Առաջնորդական վարչութեան դէմ՝ հրատարակուած բննադատական յօդուածներու պարունակութեանն զժգոհ, զի մեր է Գահիրէի Միջկցեպին փաստաբանաց կաճառի, և ի վերջոյ Բուզուաէօն Սէնէալի, բողբո բառնարով Պ. ֆափազեանի դէմ:

«Եղիպտոսի Հայոց Առաջնորդի այս «դիմումները ընդդէմ» Պ. ֆափազեանի, «բնական է թէ ապարդիւն պիտի մընային, քանի որ ամէն ոք պարտ է բննադատելու վարչութեան մը գործերը ու արարքը, բաց աստի Պ. ֆափազեանի փաստաբանական արուեստին հետ ու է անչլութիւն չունի «զուտ ազգային հանգամանք ունեցող այս միջկցեպը, որպէսզի փաստաբանաց կաճառը իրաւասութիւն ունենայ զարժանն սնորհելու: Թէրիս այս միջկցեպը լուծուի տեղական «գաղտարանաց առջև:

«Պ. ֆափազեան յայտարարեր է «Պ. Գալթօն տը Վիտտի թէ անհուսալանք երջանիկ կը համարի ինքզինքը՝ անդամ դռնուելուն Միջկցեպին փաստաբանաց կաճառին, «ուր ապահովագէտ վստահ է վայելել այն պաշտպանութիւնը որ հաւանականաբար իրեն կընար զլացուէր Պոլսոյ մէջ այսպիսի պարագայներու տակ»:

Կը ցաւինք յայտարարելու թէ Առաջնորդ Գեր. Յ. Եպիսկոպոս Այվազեանի բողբոջը՝ ամենավատ արդարութեան տակ թողուցած է միջկցեպին փաստաբանաց կաճառը և երոպական մամուլը:

Ինչպէս որ «Բրքի էժիքսիէն» կը գրէ, փաստաբանաց կաճառի վարչութիւնը նկատողութեան առած չէ Ս. Առաջնորդի զանգատագիրը ընդդէմ Պ. ֆափազեանի:

Առանց վերադառնալու այս տըրտառի միջկցեպին մանրամասնութեանց վրայ, կը խոստանանք յառաջիկայ թիւով հրատարակել երկու նամակներն Պ. Յ. Այվազեանի և փաստաբան Պ. Խոսրով Զոհրապի, սոյն միջկցեպին առթիւ:

ՄԻԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

«ՆՈՐ-ՕՐ»Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1901 թի փետրվար ամսոյ մէջ Գահիրէի նորակազմ Հայ Լսարան-Ընթերցատուն ընկերութիւնը Շարա-Ապտի-Ազիզի թատրոնին մէջ թատերական ներկայացում մը տալով ձեռք բերած էր 2,500 զահ. ողջի զուտ հասոյթ մը:

Նոյն րնկերութեան Գործադիր Ժողովը օգտուելով իր կանոնագրից. յօդուածին արժանապատեանն որ նախատեսած էր պարբերական հանգանքու հրատարակման իրատուները, կ'որոշէ հիմնել ազգային թերթ մը որուն պէտքը զգալի էր Եղիպտոսի համար, կը կնքէ պայմանագիր մը Գարրինեան արպարանին հետ միջ տարուան ժամանակամիջոցի, վաւերացնել կուտայ պայմանագիրը նոյն ընկերութեան Մայր-Դիւանի, Յունիսի 2ին հրապարակ կը հանել առաջին թիւը «Նոր-Օր» անունով:

Ինական է թէ թերթ մը որ շաբաթը երկու անգամ կը հրատարակուի և ամսական քսան ոսկի աւելի ծախքի կարօտ է, 2,500 զրը, ողջի սկզբնական գումարով մը չէր կրնար յարատեւութեամբ պահուիլ եթէ օտար օտան գախութիւն մը չի գար ձեռք կարկանդու այդ ազգօգուտ ձեռնարկին:

Անցեալ տարոյ Սեպտեմբեր ամսոյ մէջ կարգուած Բնիչ Յաննաթողովոյ տեղեկագիրն մէջ ալ հաստատուած է ասի, յորում Գնիչ Յաննաթողովը բաժնէր:

Յայտնի կ'երևի թէ ո՛չ Տիար Ս. Բիւրատ ո՛չ միս անգամ Գործ. Ժողովոյ և ո՛չ ալ անգամը Մայր-Դիւանի ըստ բաւականին հետատես չէն գտնուած թէ այդպիսի ձեռնարկ մը բաւական մեծ նիւթական ուժի մը կը կարօտի և հազիւ թէ ձեռնին ունենալով փոքրիկ գումար մը փութացած են թերթին հըրատարակումը: Գծուար չէ երեսակայն թէ ինչ պիտի ըլլար թերթին վիճակը եթէ երբէք Տիար Սմբատ ֆափազեանի մը աշակցութիւնը չ'հաներ այն վայրկեանին որ ալ ընկերութեան նիւթական ամեն միջոցներն և պահեստի դրան սպառած, հարկ անհրաժեշտ պիտի ըլլար դադարեցնել թերթը և այգու ունայն պիտի կորնչէին վստահուած դրամներն, ի բաց թողով բարոյական վարկաբեկութիւնը ուրիշ իւրաքանչիւր իւր բաժնիւ պիտի ունենար:»

«Այսօր նոյն իսկ «Նոր-Օր»ի հրատարակութիւնը մեծ զոհողութիւններով կը կատարուի. «Նոր-Օր»ի հրատարակութիւնը ամսական քսանէն աւելի ոսկիներու կը կարօտի, թէ ինչպէս. «Նոր-Օր»ի վարչութեան

ներկայացուցած հաշուեկշիռն կ'երևի թէ Տիր Գարբրիելեանի իրաւունք մշարուած է եռամսեայ 3,400 դր.ի մօտ գումար մը. միջին հաշուով օրեֆն կրնայ ամսական 12 ոսկի ենթադրուիլ, որ իր մէջ կը պարունակէ շարեւոր իրաւունք շարաթը երկու անգամ, սպարաթը մեծ թղթի գին կընկնէ. գէթ ամսական 300 դր. ալ պէտք է ենթադրել խմբագրի իրաւունք, 150 դր. ալ ցրուելի ամսական, 100 դր. ալ խմբագրատան վարձք, երեք ոսկի ալ թղթատարի ծախք, ուրկից կրնանք հետեցնել «Նոր-Օր»ի ծախքը՝ ամսական 22 ոսկի միջին հաշուով. ո՞վ պիտի հայթայթէ ուրեֆն այս գումարը որ անհրաժեշտ է ամեն ամիսը համար և ինչ հասոյթ ունեցած է ցարգ «Նոր-Օր» իրեն համար: Միայն բաժանորդագրիներէն 1850 դր. գանձուած է եռամեկի մէջ, ձեռքէ ծախուած թերթերու գումարն եղած է 634 դր. որոնց վրայ բարգաւազով յայտարարութիւններէ և մահագրներէ գոյացած 100 դր.ն ալ, ընդամենը եռամսեայ հասոյթ մը կը գոյանայ 2,560 դր.ի կամ ամսական 850 դր.ի գումար մը որ երբէք չ'ապահովեր «Նոր-Օր»ի գոյութիւնը:»

«Քայց հարկ և կասկէ և յուսահատի այս թուանշաններուն առջև և ի մի հարուած ջնջել գործ մը որ արդէն սկսած է և որ բարոյապէս իւր մեծ նշանակութիւնն ունի Լաւրան-Բնթերցատան համար և օգտակարութիւնն անվիճելի է հանրութեան համար՝ բաւական է որ թերթին վարչութիւնը Բնդհ. ժողովն բոլորած, միշտ գտնուի թէ նիւթական թէ բարոյական և թէ գրական անասկաներով կարող և պարկեշտ ձեռքերու մէջ, ընթանայ որոշ ուղղութեամբ առանց այս կամ այն կողմ հակելու, անկեղծ լըլըլ իւր գործառնութեանց մէջ, երբ'ք չ'ըլլայ գործիք անհատական կամ կուտակցական կիրքերու միշտ աչքի առջև ունենալով ընդհանուրին շահը, հեծի վանկով անհատներու վեճերը և անձնական յարձակումները:»

«Նոր-Օր» որովհետև միանգամ ծնունդ առած է, ապրելու իրաւունք ունի և ընկերք պարտաւոր կն պահպանել անոր գոյութիւնը՝ իրենց անխնայ աջակցութեամբ, և արդէն այսպիսի ընկերական գործերու մէջ ընկերաց միութիւնը ուրիշ բանի չ'ծառայեր բայց եթէ հանրութեան օգտին համար եղած ձեռնարկները քաջալերել, անհատական զոհողութիւններ ի մի ամփոփելով:»

Վերջապէս վերագրանալով մեր նիւթին՝ երբ Պ. Ս. Բիւրատ, իբրև Ատենապետ Գործադիր Ժողովոյ Լաւրան-Բնթերցատան ընկերութեան՝ կոչոււմ ըրաւ Պ. Փափազեանի աջակցութեան, սոյն վերջինը իբրև շեքմ համակիր ազգային կրթական յատկապիմութեան, սիրալոյսով ընդունեց աջակցել, և ամէն բանէ առաջ ձեռնարկեց «Նոր-Օր»ի վարչութեան Գիւնարին, որ կազմուեցաւ ընդ նախադասութեամբ վսեմ. Արիւ պէյ Եռուստի, անգամ Միջազգային դասարանի վարչութեան անգամ ընտրուեցան հանրութեան վստահութիւն ներշնչող արծանաւոր անձինքներ, որոնց անունները այս ատենուրեք արդէն հրատարակուեցան «Նոր-Օր»ի մէջ: Աղեքսանդրիայէն՝ վարչութեան խորհրդական ընտրուեցաւ Տ. Գրանիկ Զրպուրճեան, հաշուակալ Ռամիկի երկաթուղւոյ վարչութեան:

Վարչութիւնն իր առաջին նիստին մէջ որ տեղի ունեցաւ 1900 Յուլիս 10ին՝ «Նոր-Օր»ի խմբագիր կարգեց զՏ. Ս. Բիւրատ:

«Նոր-Օր»ի նախաքայլերուն մէջ վայել

բաժ համար ու աջակցութիւնը գրգռեցին կարգ մը շարամիտներու նախանձը և ատերութիւնը, հակառակորդներու բանակ մը կազմուեցաւ «Նոր-Օր»ի դէմ, որոնք ի գութատակեցան ումարտիչ զայն վարող և խմբագրող մարմինը, և հակառակ այն կատարի գրչապայքարին որով փորձեցին հանրութեան վստահութիւնը խախտել «Նոր-Օր» ի վրայէն, «Նոր-Օր» բողոքեց իր եռամսեայ 1900 Սեպտեմբեր 2ին: Զը մտնանք դեռ տեղի թէ այդ եռամսեայ ժամանակամիջոցին «Նոր-Օր»ի հաշուական գործառնութիւններ, գանձում ծախք ամէն ինչ կը կատարուէին Գործ. Ժողովոյ Ատենապետ, Պ. Ս. Բիւրատի միջոցաւ: 1900 Սեպտ. 2ին առկին է որ վարչութիւնն՝ «Նոր-Օր»ի նիւթական վրայ ձեռք գրաւ ու բողոք հաշուական գործառնութիւններ իր միջոցաւ ըսկրան կատարուիլ:

«Նոր-Օր»ի վարչութիւնը ընչ գտնարութեանց չը բախեցաւ իր միամտայ գործառնութեանց ընթացքին մէջ, նոյն ինքն Գարբրիելեանի տպարանը որ մէկ ասարի ժամանակամիջոցի համար պայմանագիր կըրած էր «Նոր-Օր»ը տպագրելու, «Նոր-Օր»ի երեւումէն երեք ամիս անցնելէ վերջը որ կը պատահի Օգոստոս 26ին, անակնկալ գտնարութիւններ յարցոյ պայմանագրի վրայ, վերջապէս չ'երկարեց վարչութեան կամքին անկախ պատճառներով պայմանագիրը խզուեցաւ, ուրկէ շարաթ մը վերջը հիմնուեցաւ «Միութիւն Տպարան»ը, որտեղ սկսաւ տպուիլ «Նոր-Օր», աւելի ընդարձակ ծաւալով շորս սիւնակներու վերածուած, առանց ու և գնի փոփոխութեան:

Երևակայեցի՞ք թէ գեւարութիւնները որքան աւելի անհեղեղ և սրբաւ տաճանելի պիտի ըլլային վարչութեան համար, եթէ Միութիւնն ապարանը որ այդ միջոցին փակուած էր, և որի փակման առթիւ արդէն գողցած էր «Փիւնիկ»ը, չը սրամաղթեր հայերէն տառեր որոնք աճուրդի գրուած ըլլալով Միութեան ապարանի կողմէն գնուեցան: Եթէ պատեհութիւնը զրանար այս օգնութիւնը վարչութեան, կամ այն է որ վարչութիւնն կամայ ակամայ Գարբրիելեան տպարանի անհեղեղ պահանջներուն պիտի ստիպուէր գլուխ ձեռնու, և կամ այն է որ երկու ամիս շար «Նոր-Օր»ը զազրեցնելու հարկին մէջ պիտի գտնուէր, Պոլիսէն և կամ վիեննայէն Հայերէն գիրք կարենալ բերել տալու համար, բան մը որ վարչութեանն ոչնչուող սրտմտութիւն պիտի պատճառուէր:

Այս նեղութիւնները և բռնաթոր տառապանքը հաղիւ անցուցած երբ շունչ առնելու ժամանակ էր, յանկարծ ուրիշ տիտր գեղքեր եկան վրդովելու վարչութեան անգործութեան ժամերը: Վարչութեան և յորժեգորութեան մէջ էր ուղղակի միջադէպը այս անգամ:

«Նոր-Օր»ի խմբագիր Պ. Ս. Բիւրատ ամբաստանուած էր «Նոր-Օր»ի վարչութեան կողմէն ինչ ինչ պատճառներով, որոնք որքան ալ թեթեւ ըլլային, վարչութիւնն չը պիտի կրնար ուրիշ կերպով անօրինել բայց եթէ հետեցնելով զորքէն զՏ. Ս. Բիւրատ որի դէմ կայր ատելութեամբ մը արդէն զինուած էր հանրութիւնը:

Պ. Ս. Բիւրատի խմբագրութենէ հրաժարեցուցման հետեւ օրը՝ Փարիզ գրուեցաւ Պ. Երուսանյ Օտեանի տեղադր ազգայիններէն միւսն միջոցաւ, զալ «Նոր-Օր»ի խմբագրութիւնը ստանձնելու համար, որ նոր

նամակը տանալէն շարաթ մը առաջ փարիզի մէջ մնայուն պաշտօն մը ստանձնած ըլլալուն, ցաւ յայտնած էր թէ չը պիտի կրնար ստանձնել իրեն առաջարկուած պաշտօնը: Վերջապէս իրաց այս ներքուն վիճակին մէջ Պ. Փափազեան հակառակ իր փաստարանական գրադուստրուին և «Նոր-Օր» վարչութեան ներկայացուցչի պաշտօնին, ստանձնեց նաև «Նոր-Օր»ի խմբագրութիւնը զոր կը վարէ մինչև ցայսօր անձնուէրարար:

1900 Դեկտ. 2ին «Նոր-Օր» բողոքեց իր վեցամեային, և այս առթիւ արտաքոյ կարգի Բնդհ. Ժողով մը գումարուեցաւ Դեկտ. 3ին կիրակի օր, որ խնդրոյ նիւթեղաւ «Նոր-Օր»ի վարչութեան ծրագրի վաւերացումը: Պ. Փափազեան ըստ ինչորանց ժողովոյ ներկայացուց նոր ծրագիր մը, զոր Բնդհ. Ժողովը միաձայն հաւանութեամբ վաւերացուց: Այս ծրագրի համեմատ «Նոր-Օր»ի վարչութիւնը անկախ մարմին մը ճանչցուեցաւ, վարչութեան Գիւնար կազմելու իրաւունքը պատկանելով վարչութեան ներկայացուցչին որ միմիայն պատասխանատու պիտի ճանչցուի առաջի Բնդհ. Ժողովոյ:

Վարչութիւնն նկատելով որ շարունակ վեց ամիս Ռուսիա և Պարսկաստան 450 բաժանորդի թերթ կը դրուէր, առանց և ոչ մէկէն պատասխան ստանալու, վեցերորդ ամսոյն մէջ գաղափարեց առաջուրը, կասկածելով որ մի գուցէ Ռուսիայ մէջ Սանսիւրը վար գրուած ըլլայ, ու թղթատարի ծախքը ամսական երեք ոսկի վրայ երթայ:

Սակայն վարչութեանն զարմանքը մեծ եղաւ երբ եօթներորդ ամիսը՝ նամակ մը ստացաւ Թիֆլիզ քննիչ ազգայինէ մը որ կը խնդրէ բաժանորդ գրուիլ «Նոր-Օր»ի: Ինչ յետոյ կողմակէն գարձեալ երկու ազգայիններ, Տ. Մ. Միւսսեան և Տ. Մամուլեանց, որոնց անունը «Նոր-Օր»ի բաժանորդաց ցանկին մէջ չի կար, մին ութը թուպի իսկ միւրը եօթը թուպի դրկած էին թղթագրամ, խնդրելով «Նոր-Օր»ի բաժանորդ դրուիլ: Վարչութիւնն անմիջապէս թերթերը առաքեց և առանձին նամակաւ «Նոր-Օր»ի տարածման համար իրենց աջակցութիւնն խնդրեց: Վարչութիւնն այդ օրէն ի վեր որ 4 ամիսներ անցած են, զեռ պատասխան ստացած չէ:

Վարչութիւնն քաջալերուած վեցամեայ շրջանին մէջ գտած ընդունելութիւնէն՝ շանաց արժանաւոր աշխատակիցներու խումբ մը կցել խմբագրութեան, օժտելու համար «Նոր-Օր»ը շահեկան պարունակութեամբ: Եւ ինչպէս որ տեսնուեցաւ Պ. Պ. Յ. Ալփիար, Խ. Զահրայ, Յ. Սէթեան, Ն. Աղազարմ, Հ. Պարպրեան, Արթ. Սր. Բնդ. Սամուկեան, Ս. Օտապաշեան, մերթ ընդ մերթ նուիրեցին իրենց աշխատակցութիւնը «Նոր-Օր»ի որոնց՝ վարչութիւնն այժմէն կը փութայ շնորհակալութիւն յայտնել:

Շնորհակալութիւն կը յայտնէ Պ. Մեօնիէի, Ֆրանսացի հայաւերը որ ոտանձնեց թերթի պատասխանատուութիւնը:

Շնորհակալութիւն կը յայտնէ նաև այն ամէն ազգայնոց և արգոյ բաժանորդաց, որք բարեհաճեցան ազգախրական եռանդով քաջալերել մեր ազգոյուն ձեռնարկը:

Վարչութիւնն չի կրնար սակայն առանց արգահատելու անցնել նախանձու և ցնորած հակառակորդներու վրայ, մարդ ամբաստանելու, արժանաւոր գործիչներ պարտաւելու ե-

րազով սնանոց մեղաներու վրայ որոնք շարժեցան ու կը շարկին, յուզուեցան ու կը յուզուին հրապարակին վրայ առանց ու և որոշ և ազգու նպատակի, շարունակ ընդդէմ «Նոր-Օր»ին իր բազմաթիւն վարիչին:

Սակայն թէ վարչութիւնն և թէ ներկայացուցչի Պ. Փափազեան՝ օրքան անխոհեմ ըլլալու կին պատասխանելու համար այսպիսի անմար յարձակումներուն որոնք ստակալի զգուսնը ազգեցին հայ ժողովրդին:

Ո՞վ չ'իտար հրապարակապիւր էմիլ արժեքարանի այն նշանաւոր խօսքը թէ՛ «Երբ միակ միջոց մը կայ սուս ամբաստանութեան մը պատասխանելու, այն է չ'սալ կարեւորութիւն թողոյ որ պոյաւոր սուսերով մտազման անկողնից զորի»:

Թո՞ղ հասարակաց կարծիքը հանդիսանայ անաչառ դատաստան, ու արդարադատ ատենն այսպիսի ողորմելիները դատելու: Միթէ հանրային կարծիքը չը պիտի մեղադրէր կարծէք զմեզ եթէ պատասխան տալու զիջած ըլլայինք այդպիսիներու:

Վարչութիւնը իր վերջին բարը ըլլալով ցաւ կը յայտնէ Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Յ. Եղիսկոպոս Այվազեանի՝ որ անգարման նկի անխոհեմութիւն գործեց վերջերս՝ զի մեղով Միջազգային փաստաբանաց կանաթի նախագահ մեծանուն Պ. Գառթուն ար վիւտի՝ որպէսզի սոյն վերջինը պատիժ անօրինէ Պ. Փափազեանի, իբր անգամ յիշեալ կանաթին, «Պատասխան մը» վերնագրին տակ «Նոր-Օր»ի մէջ հրատարակուած ծանօթ յօդուածին առթիւ:

Այվազեան Սրբազան զանգասելէ առաջ կանխաւ գիտնալու էր, թէ արդեօք Միջազգային ակումբը ու և իրաւասութիւն պիտի ունենար զարժանն անօրինել Պ. Փափազեանի, որուն յանձնաքը եղած է բահանայի մը արարքը քննադատել:

Վարչութիւնն ցաւ կը յայտնէ որ Սրբազան Առաջնորդը զուր անեղ զգուցի կացուութիւն մը ստեղծեց, հայ և օտարազգի ակումբներու արհամարհանքը շարժելով:

Վստահ եմք թէ կ. Պոլսոյ հայոց Պատարարքին և Արտասահմանեան հայոց թերթերու ուշադրութիւնը պիտի դառնայ, Այվազեան Սրբազանի անգարմանելի սխալին և կամ փոքրգոյթեանը վրայ որ Եգիպտոսի Ազգ. Անճնայինքու մէջ սխտու տեղ պիտի գրաւէ:

Վարչութիւնն անհունապէս կրկնակի՝ իր ծրագրի ուղղութեան հաւատարիմ ընթացած ըլլալուն, կը մատուցանէ գնեկայս. խոտասնալով իր միամեայ գործառնութեանց հաշուելը շին հրատարակել յաջորդ թուով:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ», Ի

ՍԵՆՏԵՆԵԱՆ ՎԱՅՍ-ՊԱՏԱՆ ԲԱՅՈՒՄԸ

Մեր ընեան կըբարց ծխախոտի և սիկառէթի գործարանատան բացման հանդէսը չըբզ կերպով տեղի ունեցաւ անցեալ երկուշաբթի երեկոյ ժամը 5 1/2ին Թէֆլիզի Նորակառոյց շէնքին մէջ: Իննպէս որ տեղական և եւրոպական թերթերը գրած էին:

Հանդիսավայրը լեցուած էր Հայ և Օտարազգի բարեկամներու և հետաքրքրիներու խումբ բազմութեամբ: Հանդէսին ներկայ էր նաև Եգիպտոսի Հայոց Գեր. Առաջնորդը: Անդիւական ղինորական նուագածուաց խումբ մը մերթ ընդ մերթ կը նըուագէր ընտիր կատրներ: Ճոխ պիւճէ

մը հրաւիրեալներուն տրամադրութեանը տակ գրուած էր: Կարելի չէ չը խնդակցել այսպիսի հաստատութեան մը համար որ այնքան պատուաբեր է Ազգիս:

Հաշուեցոյց 1901 Փետրուար 27ին Գահիրէի Օսկերայի Խճաւակն քաւրունիին մէջ ի նպաստ Արխաւսիսմիւսի եւ Որբախնամ ընկերութեանց տրուած ներկայացումին:

ՄՈՒՏՔ

Table with 2 columns: Item name and Amount. Includes items like 'Բարձր, Ապրիլ փաշա Հիւլի', 'Խախ, Եղիպտոսի', 'Վեճ. և ուր. Տիարք', etc.

Table with 2 columns: Item name and Amount. Includes items like 'Վերածուած', '18 Պէն. և Ու. կորդի 1.00, 400լն', '1 » 600', etc.

Table with 2 columns: Item name and Amount. Includes items like 'Գերու. Գոսն. Խուսկին վարձք', 'Տոսեկը ցրուողին և զրամք', etc.

Table with 2 columns: Item name and Amount. Includes items like 'Չուս օտի', 'Տրուած Վ. ար. Որբա.', '» Արաք. Հոգա.', etc.

Table with 2 columns: Item name and Amount. Includes items like 'Քննուած և հաստատուած բաղադրիս Աղբատինամ', 'և բարձր Որբախնամ ընկերութեանը', etc.

Սրբազան Պատրիարք Հօր 1046 համար և 1901 Ապրիլ 16 թուակիր նամակի պատճէնը, որ վիճակիս Գերապատիւ Սրբազան Առաջնորդ Հօր կողմէ պաշտօնապէս հաղորդուած է խառն Յանձնաժողովիս:

Գերաշնորհ Տ. Յովակիմ Ս. Եպս. Այվազեան Բարեխնամ Որբախնամ Հայոց Եպիսկոպոսի

Ի Գահիրէ

Ապրիլ 2 թուականու (Ն. Տ.) Ձեզ ուղղած գրովս յանուն որոց (20) քսան անդ. ոսկեայ չէք մը գրկած էք մեզ, յայտնելով թէ՛ այդ գումարը գոյացած է տեղայն Աղբատինամ և Որբախնամ վեց ընկերութեանց կողմ ի նպաստ իրենց և Ազգային որոց տրուած թատերական ներկայացումին:

Մեր Հայրական Գոհութիւնը կը յայտնեմք յիշեալ ընկերութեանց մեղուական անդառց, որ քրիստոնէական գիտութեան ոգով ջանադիր գտնուած են օգնութեան ձեռն կարկանդակ մեր արարողի որոց, բաժին հանելով անոնց այս բարեխնամ ձեռնարկին արդիւնքն, և այնու ի թիկուն հասանել մեզ, որ այնքան ծանրաբեռնեալ ենք անոնց բազմադիմի հոգեբով: Կը նրուիրենք անոնց ամենուն մեր սրտազին օրհնութիւններն և կը մաղթենք ի Բարձրեղոյն վարձատրելի զիրենք իր երկնային անսպառ գանձէն:

Աւելորդ չենք համարիր յատնել թէ՛ չէրին արժէքը գանձուելով բնած է Օսմանեան զբանով քսաներկու լիբայ և յանձնուած Որոց Մտուակին:

Աղօթակից. Պատրիարք Կ. Պոսոյ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ Խառն Յանձնաժողով Ատենապետ Ստենապետ Յ. ՄԱՐՁՊԱՆԵԱՆ Ն. Մ. ԱՂԱՋԱՐՄ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Սմբատ... Փափագեան Ի Գահիրէ

Ձեր Յունիս 14 թիւ գրուող հարցմանն ի պատասխան՝ կուգամ յայտարարել թէ՛ «Արշալոյս» ի 184րդ. թրուոյն մէջ Յ. Քիւրքեան տարագրութեամբ հրատարակուած նամակի պարբերութիւններէն «Տէր հայրերը վեր կ'ըլլեն ծիծաղելով» գրուածը սուտ է:

Վասն զի ինչո՞ւ պիտի ծիծաղէինք, քանի որ տեղի չ'կար:

Կը ծիծաղի մարդ բարեգործական ձեռնարկի մը, կամ առ այն աշխատողին վրայ, թէ ոչ՝ կուրախանայ, որպէս և մենք:

Եղեղեցոյ մէջ, առաւօտեան քարոզի պահուն, Լսարան-Ընկերացատան բացումը ծանուցանելէ ի բաց ունկնդիր հաւատացեալներուն յորդորելով գանտնք որ «փոխանակ սրճարաններ երթալու» Ընկերացատան յաճախեն», հոս ևս, Նորին Սրբազանութիւնը, ծերունի հայրութեան ժըպիտը շուրթը, խօսեցաւ Լսարան-Ընկերացատան նպատակին և անորմէ առաջ եկած ազգային և մտաւորական օգուտներուն վրայ, առաջարկելով ներկաներուն որ իրենց բարոյական թէ նիւթական աջակցութիւնը բնաւ չզլանան այս ազգօգուտ հիմնարկութեան:

ԱՅԾՄԵՆՈՒԹԻՒՆ

ԼՍԱՐԱՆ-ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԻՈՐ Ի Ս. Յ. ՈՒ Մ. Ը

Ինչպէս արդէն հրատարակուած ծանուցումէն էր, անցեալ կիրակի առաւօտեան ժամը 11ին տեղի ունեցաւ Լսարան-Ընկերացատան բացումը, որ բարեբաղդաբար զուգահիշյալութիւն մ'էր Ազգ. Սահմանադրութեան տարեդարձին:

Ընկերացատանը կը գտնուի Ֆրէրներու ձրի վարժարանի կից շէնքին մէջ և կը պարունակէ երկու ընդարձակ և փառաւոր սրահներ. միակ անպատեհութիւնը որ կայ՝ կեդրոնէ քիչ մը հեռաւորութիւնն է, և այս անպատեհութիւնը վստահ ենք թէ վարչութիւնը ջանադիր պիտի ըլլայ դարմանելու, ըստ կարելոյն շուտ: Աւելորդ է ըսել թէ՛ ամի նախ և յառաջ կախում ունի ժողովրդական ամէն զասակարգի քաջաբերական համակրանքն: Եւ ի՞նչ կը պակսի մեզմէ, քանի որ ամիսը երկու դահեկան զո-

հուլթեամբ կրնանք քաջաբերած ըլլալ այսպիսի հանրօգուտ և իր տեսակին մէջ յիսկը՝ հաստատութիւն:

մը, որ բարեբաղդաբար կուգայ Արաքային մեծ պակասը, ամօթալի և յուսահատական պարագը որ իր անհետացումովը թողուց Հայ: Եւ այն քիւրքը... Ողորմելի ազգ մ'ենք. երբ հաստատութիւն մ'ըլլանք բանէ առաջ՝ անտարբերութեան կը զոհուի, աւերակ կը դառնայ, կը մեռնի. այն ատեն միայն անկեղծ կամ կողորդիլուական արցունքներ կը թափենք անոր փլատակներուն վրայ: Կանարգներ, կանուարկներ ու անխղճօրէն կը հալածենք անձերին ու հանգստութիւններն հանրութեան օգտին զոհած գործիչներ: Մարդս միշտ հերոս չ'ընար մնալ. և երբ՝ ալ գանձած մեր անտարբերութիւնն և մեր ընկերական ազատութիւնը, հրապարակէն կը քաշուին անոնք, այն ատեն միայն կ'ըլլանք անոնց յարգը, եթէ չըսեմ կուրախանանք ալ, երբ անոնք հաճելի դարձած չ'էին մեր բնահաճոյքին, մեր համոզումներուն, մեր կուսակցութեան:

Ընկերացատանը զարգարուած էր այնպիսի լուսանկարներով և «Կեցցէ Սահմանադրութիւն» «Մէր և միութիւն» գործակիր ժապաւէններով: Հարկը յիսունի մօտ ազգայիններու խուս՜ն բազմութիւն մը փութացած էր ներկայ ըլլալ սոյն հանդէսին, որուն կը նախագահէր Գեր. Այվազեան Առաջնորդը, հետն ունենալով Տէր Եղեղեցի և Տէր Սրապիոն քահանայները: Տիար Յ. Մարգարեանի համակրելի բարեացակամութեամբ՝ Ազգային վարժարանի ուսանողներու երգեցիկ խումբ մը երգեց ազգային երգեր, զոր դժբաղդաբար շատ անգամ լրսելու առիթը չունինք:

Եկեղեցոյ մէջ, առաւօտեան քարոզի պահուն, Լսարան-Ընկերացատան բացումը ծանուցանելէ ի բաց ունկնդիր հաւատացեալներուն յորդորելով գանտնք որ «փոխանակ սրճարաններ երթալու» Ընկերացատան յաճախեն», հոս ևս, Նորին Սրբազանութիւնը, ծերունի հայրութեան ժըպիտը շուրթը, խօսեցաւ Լսարան-Ընկերացատան նպատակին և անորմէ առաջ եկած ազգային և մտաւորական օգուտներուն վրայ, առաջարկելով ներկաներուն որ իրենց բարոյական թէ նիւթական աջակցութիւնը բնաւ չզլանան այս ազգօգուտ հիմնարկութեան:

Ապա բեմեյալ ընկերութեան Գործ. ժողովոյ Ատենապետ Տիար Ս. Օտապաչեան և ճառախօսութեամբ մը, նուրբ ու ջղուտ, տեղ տեղ մեղմաղձոտ գրականութեամբ համեմուած, յուզուած և յուզիչ շեշտերով ոգևորեց սրտերը, եզրիտահայ գաղութին վերջին 10-12 տարուան ազգային կեանքին վրայէն քերելանցընելով և մասնաւորապէս ծանրանալով այսպիսի «ազգային հաստատութիւններու թագուհի» ընկերութեան մը գոյութեանը վրայ:

«Կոչում» ընելով սէր և միութեան՝ Եկեղեցիէն անդին, ըսաւ, հոս պիտի համախմբուինք միմիայն զիրար ճանչնալու համար, մտերմօրէն, անկեղծօրէն, և աւելի եղբայրսիրաբար: Հոստեղ պիտի վարժուինք ազգասէր-

ներ և ուսումնասէրներ ըլլալ, Հայ ըլլալ ամէն և ամէն բանէ առաջ. չբաւար լով այս անունը կրել, այլ ճշմարիտ Հայ կոչուելու համար՝ պէտք է Հայ ըլլալ սրտով, հոգով, նկարագրով, փառքով ու բարքով. և ինչ:

Ընկերացատան բացումը զուգահիշյալ ըլլալով Ազգ. Սահմանադրութեան տարեդարձին՝ բողոքատեց անցեալին մէջ անոր տնտեսութեան խանգարման օգնութիւնը այսօրուսին հետ: «տխրաբով պարագայ մը, յարեց, որ կը փոխարինուի սոյն կրթական հաստատութիւն: Մտաւորական յառաջադիմութեան, այս պէտք է՝ ըլլայ մեր այսօրուսն Սահմանադրութիւնը, որքան ատեն որ մեր ազգը պիտի հեծէ ստրկութեան լուծին տակ:

Տիար առնուապետին յաջորդեց Տ. Աւետիս Կազճեան, Բիւզանդիոնի «Ալօն» Այդ ուսեալ բայց դեռ վարչական գործերու մէջ անփորձ երիտասարդը՝ իր ճառին յառաջաբանին մէջ շեշտելէ յետոյ Ընկերացատան մը անհրաժեշտութիւնը, իր սովորական հեղինակ աւելու ոճով կատարեց կը բողոքէ քիւրքին դէմ, աղայականութեան դէմ, և ինչ. և ինչ. «Ալօն» անտարբերութիւն չճանչնար բնաւ և քիւրքի փակումը կը վերագրէ միայն վարիչներուն ազնուապետական ձգտումներուն: Քիւրքի նախկին վարչութիւնը պաշտպանողներէն չենք, բայց մեր բարեկամ Կազճեան չառաջարկ կը սխալի երբը միայն արտաքին երկոյթներէն դատել և վարչականը, ներքինը, բնաւ աչքի առջև չունենալով: Կը սխալի նոյնպէս, երբ մեր ժողովուրդի անտարբերութիւնը բարձր ուղղած չէ ու չուզեր:

Ի վերջոյ երկարօրէն ճառեց Տիար Ետար Շիշմանեան, որ երկար ատեն մնացած է Ամերիկա. դիւրմբանելէ սճով մը բացատրեց ներկաներուն ընկերացատան, համախմբման օգուտները, զործնական օրինակներ մէջ բերելով Ամերիկացիներու կեանքէ:

Տր. Շիշմանեան Միսիս-Սարսոնեանի մը պազարիւնութեամբ կը ճառէ: Քիչ մը ձեռքի, զլխի շարժումներով՝ սրտնց մէջ տգահ կերկի և թիչ մ'աւելի տաքարին շեշտերով, կրնայ՝ յաջորդ անգամ՝ աւելի բուռն ծափահարութիւններու արժանանալ, բան մը որ կարծեմ՝ չպակսեցաւ մեր համակրելի ճառախօսներուն և սրտնց ի բարձր սրտէ կուզենք մեր անկեղծ շնորհաւարութիւնները, սպասելով որ զիրենք կրկին լսելու հաճօքը ունենանք:

Սրբ. Առաջնորդը վերջաբանով մը փակեց հանդէսը. զովորար օջարակով հիւրասիրուեցան ներկաները, որոնք դեռ կը պահէին այդ օրուսն ու դեռութեան քաղցր ու սիրուն տըպաւարութիւնները:

Ընկերացատան բոլոր ազգայիններ ջերմօրէն կը հրաւիրուին պղատոնական համակրանքով չզոհանալ, այլ աշխատել սոյն ընկերութեան բարոյական թէ նիւթական զարգացման:

ԸՆԿԵՐԱԿԱՆ

ՖԵԼԼԱՅ ԵՒ ՔՈՒՐՈՂԸ
ՖելլաՅ կ'ընշանակէ հասարակ ժողովուրդ: Գրգրապաշ կ'ընշանակէ Ալի ժողովուրդ (երբ Ալին յաջորդութեան համար իր թըշնամեաց հետ կ'կոչուէր, իր գործերուն գլուխը կարմիր կապել տուաւ. թշնամիք սե-

կապած էին, ուսկից մնաց կարմիր գլուխ գրգռող պաշտոնը որ Բուրգերուն ալ կ'ըսուի և Պարսիկներուն ալ):

Եկզիտի բուռ է անհաւասար, սասանայական ցեղ կամ եզրապատ:

Այս ազգին հին պատմութիւնը այնքան ծանօթ չէ, քիբիտասի ատենը բազմութիւն էին և կ'ընակէին Հրեաստանի և Ասորեստանի կողմերը:

Ասոնց մնացորդն է որ կ'ընակի հիմա Մէրոսի, Անտիոք, Տարսուս, Հալէպ և այլ բազմաքանակ և գիւղերու մէջ:

Ասոնց թիւը այս կողմերը 420,000 կը հաշուեն, բայց իրենք կ'ըսեն թէ 260,000 անձէ կ'ազդկանան:

Չորս ցեղ կ'ընկնուին, իրարու միաբան են և սաստիկ զաղանապահ:

Ոչ Աւետարանը ընդունեցին և ոչ Կուրանը. իրենց տաղանդը պահպանեցին ցարգ, թէեւ ինչ ինչ փոփոխութիւններ միշտ մտած կը գտնուի, զիրք և կանոն չունենալուն համար:

Իրենք զիրեն ճանչցու համար շատ մը մասունական նշաններ ունին:

Կրօնապետներուն շէյխի կ'ըսուի, որ նըսուրական կ'համարուին:

Մէրոսիէն շէյխ մ'ընկերացաւ մեզի. այն նշանները որ սորված էի Տարսուս քաղաքէն և հայ-քուրդերէն, աննոցմով շէյխին ծանօթացանք որ մինչև իր տունը հիւրընկալեց զմեզ:

Չորս ցեղերուն անուններն են. Շէմի, Բիւրգի, Էնիլի, Ալիլի:

Շէմի, կ'ընակէ արևային, արեգակը կը պաշտեն:

Բիւրգի նահապետներն չունի, լուսին կը պաշտեն:

Էնիլի կամ Եկզիտի, կ'պաշտեն եզ մը:

Ալիլի, Ալին իրեն Աստուած կ'ըսանին:

Շէմիները, ամեն առաւօտ արշալոյսին հետ մեր կ'ընեն, կը լուսացուին կ'մաքրուին, պարսաս կ'ըլլան, արևուն շառափոցներ երեւոյն պէս՝ իսկոյն կ'խափանին երկիր, կ'համարեն կուշան կ'ըզբան, կ'ազօթեն, տուն կ'ըզանան:

Արևուն լոյսը եթէ յանկարծ մէկուն վըրայ կ'ընայ մեծ ուրախութիւն մը զգալով ազօթի կ'սկսին:

Արևապաշտը եթէ զիշերը ճամբան զբնուին և լուսնեակ ըլլայ, լուստեր մը կամ այլ լոյս մը կ'ընեն, լուսինը պաշտած չըլլալու համար:

Արևուն լոյսին մէջ ապտեղութիւն չեն ընեն:

Արևուն լոյսին ուղղակի չեն նայիր:

Ամպոտ օրերը խիստ տրտում կ'ըլլան Անձրե վազած օրերը կ'ուրախանան:

Ծիրանի գօտիին խիստ մեծ յարգութիւն կուտան:

Արևունեթը զոյները կ'պատուեն:

Եւ ուրիշ շատ մը մանրամասնութիւններ:

Արևուն խաւարան ատենները սուգի օրերն են, որ կ'ընացունեն առաջուց խորամանկ շէյխերը (կրօնապետ):

Քիբիտները, մի և նոյն կ'ընեն լուսնեակի ծնած օրերը, ամեն երկկոյ երեցած ատենը. մերջապէս արևապաշտին և լուսնապաշտին մէջ եղած տարբերութիւնը արդէ և յուսիմ է, միայն լուսնապաշտից արարողութիւնը զիշերուն հանգիստով ալի պատկանելի կ'ըլլայ:

Ալիլիները Ալին իրը Աստուած կ'ըսանին. արեւ լուսինը, եղը նորա արարածն են, որ կ'համարին, թէ և կ'յարգեն:

Ալիլիներուն դասնութիւն մէջ այսպիսի արտաոց առանդութիւններ կան որ կերպով մը միաներէն աւելի յիմար համարեցի:

Օրինակ. կ'հաւատան թէ շարժը երեք օր շէյխերուն կ'ընեն:

Ուրբաթ կ'ըսուին իրեն Մուհամմադ:

Շարաթ օրը իրեն Մուսու:

Կիբակի օրը իրեն Քիբիտաս:

Եւ պէտք է զանազանները կուտայ շէյխին, և նա կ'հաղորդէ ժողովրդեան:

Էնիլի կամ Եկզիտի, եզ մը կ'պաշտեն, իրեն միջնորդ Աստուծոյ. եզր ցեղային է:

Եզին համար բանի մը կ'ուրիշ ալ կ'պաշտեն, որ նոյն եզն ծնած հորթներուն մէջէն:

Շէյխը կ'ընտրէ եզին և կ'ուրիշոյն յաջորդները անյարմար սեպուածները մարթնով զոհ կ'մատուցանեն:

Եզը դրուած է սենեակի մը մէջ, անկողիններով զարդարուած, վրան յույ մ'ունի 72 սենեակ տարազներով շինուած:

Իր բոլը միշտ չորս քայլից (աշակերտ շէյխի) պահպան կանգնած են. երբ եզը նայի կամ գլուխ երեցունէ՝ իսկոյն շուր կամ կերակուր կուտան: զոր պատրաստած են շատ խնամքով:

Եթէ պոռայ՝ իսկոյն շէյխը կ'կանչեն պատգամ տանելու:

Շարաթ օրերը շէյխը կ'ուրիշ եզ մարգարէին հետ, հրահանգ կ'անէ. իսկ ընդհանուր պատգամները ամեն տարուայ Յունվար 12ին կ'ըլլան:

Յունվար 12ին օրը չորս ցեղին ալ նըշանաւոր օրերն են. ուսկից մնայլ լուսնն գիտեր. ոմանը կ'ըսեն Արարչագործութիւնը սկսեց այն օրը, ոմանք թէ իրենց նախահօր ծնած օրը ըլլար:

Երբ կարմիր մարգարէին (եզ) պաշտօնէին հարցուցի թէ ինչպէս կրնայ կենդանի մը Աստուծոյ միջնորդը ըլլալ, քննեց ներքին մազազարթի թերթեր բերաւ որոց վրայ արարական տառով և լեզուաւ Յովհաննու Յայտնութիւնը գրուած էր, սրով զօրաւոր կերպիւ հաստատեց որ Աստուծոյ աթոռին մէկ անկիւնը եզ մը կար, և այս եզը անոր անարատ յաջորդն է. և Աստուած իր հըրամաններն անոր միջոցաւ մեզ կ'հաղորդէ, թէ կենդանի մարդոցմէն սուրբ են, թէ կենդանիք մեզը չեն գործեր և այլն և այլն, այնպիսի առասպելական բարոյութիւն մը ըրաւ որ եթէ չլիսինայի՝ ծիծաղէն զատ ուրիշ պատասխան չէի տար. բայց իրենց զգացմունքը չլիսուորիցու համար պաղարիւնութեամբ մտիկ ըրի:

Չորս ցեղն ալ չափաւորութիւն սիրող ժողովուրդ մ'է, աշխարհային գործերը երեք հազ չեն ընեն, սուն կ'ընեն եղէկներով և ուրիշ առժամանակեայ բաներ:

Յատուկ աղօթատեղի չունին, իսլամից հետ միասնաբար, օրում և Բիբիստոնէից հետ պահք, տօն և այլն կատարել կ'ընացունեն, բայց երկուցն ալ երեսպաշտութիւն է:

Նաւէհիթիլ չունին, զիրք չունին, անունին իսլամական անուններ են, երկու կին չեն անեն, կ'ընեն չեն արձակեր, կերպիւ իւր Տարսուսի քուրդերուն կ'ընանին, բայց բանի մը մասերու մէջ մեծ տարբերութիւններ կայ:

Գալով Քուրդերուն ասոնք բարոյականի մէջ խիստ մաքուր են. Սպուկեցիք այս մասին անհոգ են, մանաւանդ այն խորասանկ շէյխերը որ Էսրայիլ խմելով արտաոց մարգարէութիւններ կ'ընեն. մեծ կեր կը խաղան խեղճ ժողովուրդի զխուն:

Քուրդերը կ'հաւատան թէ մեծնելն եօթը տարի մերջը նորէն աշխարհ կուգան, և կը ըլլան մարդ, ձի, ոչխար, շուն և այլն և այլն ըստ իր գործոց, այսինքն արդարը մարդ, մեղաւորը շուն և այլն ըստ կարգի և ստիճանի:

Իսկ Սպուկեցիք կ'հաւատան թէ մարդիկ անպատճառ մարդու կերպարանքով աշխարհ

կուգան և 72 տարի յախտնականութեան մէջ կ'ման իրենց գործիքին համեմատ փառք կամ պատիժ ընդունելով:

Քուրդերը յեղափոխելն վերջը՝ մէկմէկ կ'ընեն:

Իսկ Սպուկեցիք ժամանակակից ըլլալով չեն ճանչեր, միայն շէյխերը կրնան ճանչել որ ընդհանուրապէս 80-100 տարին ար աւելի կ'ապրին և երկայնակեաց են:

Շէյխութիւնը ժառանգական է. շէյխն որդին կրնայ շէյխ ըլլալ. եթէ արու զաւակ չունենայ՝ կինը, աղջիկ կրնայ ժառանգ ըլլալ, իսկ Քուրդերուն մէջ չեն կրնար ըլլալ:

Քուրդերը հայրենեաց համար պատերազմիլը, մեղացունելը, մեծնելը մեծ վարձք կը սեպեն և արդար կ'ըլլան. ասոնք զէնք գործածելու ցանկութիւն չունին:

Խոստովանութեան, ապաշխարութեան արարողութիւնները ճիշդ Քուրդերուն նման են, բայց Յունվար 12ին օրը Քուրդերը չեն գիտեր, անոնք Յունվար մէկին հաց մը կը շինեն, ըրդերէն Նաւի կ'ընեն (կարգի զի հաց) ըսելով՝ մէջերն կ'ընեն:

Քուրդերը Առաջաւորաց շարժուն ծով կը պահեն, Սպուկեցիք նոյն շարժը չեն ճանչեր:

Վերջապէս Տարսուսի բարոյութիւնը մեկը հայկական են, այս Նոսկերիներունը խառնուշտով է:

Պետ ևս այնպիսի մանրամասնութիւնը կան ասոնց ձեւերու մէջ որ եթէ վրել հարկ ըլլալ մատեն մը կ'ընանար: Կ. Ղ.

ՎԻՃԱԿԱՑՈՅՑ

Տարեկան հարցաքննութիւնները և առաւօտեան 8ին հարցաքննուելու են Գալուստեան վարժարանի Գ. կարգի աշակերտները՝ կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, ազգային պատմութիւն, թուարանութիւն, երկրաչափութիւն, սօմարակալութիւն, Հայերէն, Արարբերէն, Անգլիերէն և Գաղղիերէն լեզուներ, աշխարհագրութիւն, զմագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Տարեկան հարցաքննութիւնները՝ ըստ սորձան Մեծապատիւ Հագարթութեան՝ սկսուելու են առաջիկայ Հինգշաբթի ամսոյ 6ին:

Իւրաքանչիւր օր՝ բացի կիրակի և տօնօրերէ՝ տարեկան հարցաքննութիւնները՝ պատմութիւնը և զրօսանքներ ընել վերջը՝ զարգարիւն են երկուցեան ժամը 3ին:

Հարցաքննութիւններին ներկայ լինելու կը հրաւիրուին ամենայն Հայ, ինչպէս այր, նոյնպէս և կին մարդիկ՝ նամանաւանդ աշակերտաց և աշակերտուհեաց ծնողները:

Կարգաւորութիւն

Տարեկան հարցաքննութիւններու հարցաքննուելու են նախ փոքր և ապա հետզհետ աւելի բարձր կարգերի աշակերտաց և աշակերտուհիները:

Յունիս 6, Հինգշաբթի, առաւօտեան ժամը 8ին՝ հարցաքննուելու են Մանկապարտիկ Ա. և Բ. կարգերի աշակերտներ և աշակերտուհիները՝ Հայերէն լեզու, թուարանութիւն, կրօնագիտութիւն, զմագրութիւն, իրագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Յունիս 8ին, առաւօտեան ժամը 8ին սկսեալ՝ հարցաքննուելու են մանկապարտիկ Գ. կարգի աշակերտաց և աշակերտուհիները՝ Հայերէն լեզու, թուարանութիւն, կրօնագիտութիւն, զմագրութիւն, իրագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Յունիս 10 և 11ին, առաւօտեան ժամը 8ին հարցաքննուելու են Գալուստեան վարժարանի Ա. կարգի աշակերտները՝ կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, թուարանութիւն, Հայերէն, Արարբերէն և Անգլիերէն լեզուներ, զմագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Յունիս 10 և 11ին, առաւօտեան ժամը 8ին հարցաքննուելու են Գալուստեան վարժարանի Ա. կարգի աշակերտները՝ կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, թուարանութիւն, Հայերէն, Արարբերէն և Անգլիերէն լեզուներ, զմագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Յունիս 12 և 13ին, առաւօտեան ժամը 8ին հարցաքննուելու են Գալուստեան վարժարանի Ա. կարգի աշակերտուհիք՝ կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, թուարանութիւն, Հայերէն և Անգլիերէն լեզուներ, զմագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Յունիս 14 և 15ին, առաւօտեան ժամը 8ին հարցաքննուելու են Գալուստեան վարժարանի Բ. կարգի աշակերտները՝ կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, ազգային պատմութիւն, թուարանութիւն, Հայերէն, Արարբերէն, Անգլիերէն և Գաղղիերէն լեզուներ, զմագրութիւն, աշխարհագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Յունիս 18 և 19ին, առաւօտեան ժամը 8ին հարցաքննուելու են Գալուստեան վարժարանի Բ. կարգի աշակերտուհիները՝ կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, ազգային պատմութիւն, թուարանութիւն, Հայերէն, Անգլիերէն և Գաղղիերէն լեզուներ, աշխարհագրութիւն, վայելչագրութիւն, զմագրութիւն, ձեպագրութիւն, երգեցողութիւն և ձեռագործութիւն:

Յունիս 20, 22 և 23ին, առաւօտեան ժամը 8ին հարցաքննուելու են Գալուստեան վարժարանի Գ. կարգի աշակերտները՝ կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, ազգային պատմութիւն, երկրաչափութիւն, սօմարակալութիւն, Հայերէն, Արարբերէն, Անգլիերէն և Գաղղիերէն լեզուներ, աշխարհագրութիւն, զմագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Յունիս 25, 26 և 27ին, առաւօտեան ժամը 8ին հարցաքննուելու են Գալուստեան վարժարանի Գ. կարգի աշակերտները՝ կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, ազգային պատմութիւն, թուարանութիւն, երկրաչափութիւն, սօմարակալութիւն, Հայերէն, Արարբերէն, Անգլիերէն և Գաղղիերէն լեզուներ, աշխարհագրութիւն, զմագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Յունիս 28, 29 և 30ին, առաւօտեան ժամը 8ին հարցաքննուելու են Գալուստեան վարժարանի Գ. կարգի աշակերտուհիները՝ կրօնագիտութիւն, բարոյագիտութիւն, ազգային պատմութիւն, թուարանութիւն, երկրաչափութիւն, Հայերէն, Անգլիերէն և Ֆրանսերէն լեզուներ, զմագրութիւն, ձեպագրութիւն, աշխարհագրութիւն, զմագրութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն:

Առաջիկայ Օգոստոսի 27, 28, 29, 30 և 31ին լինելու են հին աշակերտաց և աշակերտուհեաց վերաքննութիւնները, իսկ նուեկները — քննութիւնները և ընդունելութիւնը հասարակական դասարաններու մէջ:

Առաջիկայ ուսումնարանական տարուայ դասախօսութիւնները սկսուելու են Սեպտեմբերի 3ին:

Հանդուցեալ կարգապետ Գալուստեանի յիշատակը Գահիրէի Հայ ժողովուրդի և ուսանողաց մէջ միշտ վառ պահելու համար որոշուած է պարգևաբաշխութեան օրը ընել 15ն Սեպտեմբերի, որովհետև Բարբար կարգապետ Գալուստեանը հիմնած է իւր ուսումնարանը 1854 թուականի Սեպտեմբերի 15ին:

Տեսուչ Գալուստեան երկու սեռի վարժարանաց

ՍՐ. ՔՆ. ՍՍՄՈՒԼԵԱՆ

3 Յունիս 1901 թ. Գահիրէ

Le Gérant J. MUNIER

Տպ. «Միւրիւն».— Ք. Ս. Փափագանի